

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ: Առանձին համարները 5 կոպեկով: Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ: Օտարաբաղադրայից դիմում են ուղղակի Կապիտ. Քեդակյա «Մուսո»:

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տոն օրերից): Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք:—Ներքին Տեսութիւն: «Նոր-Պարի» առթիւ: Նամակ Երևանից: Նամակ Ախալ-ցխայից: Նամակ Քութայիից: Նամակ Գուշէթից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտա-քին լուրեր:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ: Հրէայ:

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

«Новое Обозрѣніе» լրագիրը անվայել կերպով ծաղրում է «Մշակը» խմբագրին, որ այժմ «Մշակը» ստիպված ենք շարաթը երկու անգամ հրատարակել: Լրագիրը հար-ցնում է թէ ստացված փողը ինչ արեցինք, և պատասխանում է թէ մեզ մտ պահե-ցինք: Մեզ զարմացում է պ. Ստե-փանովի այդ քննադատական խոսքը «Մշակը» ընթերցողների գրպանների մա-սին: Մենք պ. Ստեփանովին այսքան միայն կը պատասխանենք, որ մեր գրա-կան զործուհեութեան տան և երկու տարվայ ընթացքում, ընթերցողների ոչ մի կոպեկ չէ մտել մեր գրպանը, քանի որ մեր անձ-նական աշխատանքը այդ բոլոր տարիների ընթացքում անխլած էր և բացի սրանից մենք մեր գրպանից էլ ծածկել ենք ամեն տարի բաժանորդագրութեան պակասորդը: Մենք յոյս ունենք, որ մեր ընթերցող-ները հասկանալով թէ մենք ինչ արեցինք տան և երկու տարվայ ընթացքում, «Новое Обозрѣніе» լրագրի խմբագրի տեսակէ-տից չեն նայի մեր արածի վրա: Այդպէս անկասկած վերաբերվել զէպի տան և երկու տարվայ անցած, ամենաանբերովի գրականե-րով լի մի զործուհեութիւն կարող էր միայն մի մարդ, որին խորթ է տեղական հանգա-մանքների հասկանալը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՆՈՐ-ՊԱՐԻ» ԱՌԹԻ ԸՆԿՆԱՆՐԱՊԵՍ

Ընթերցողները զուգե յիշում են, որ «Նոր-Պարի» պ. խմբագիրը յայտնեց թէ ստացել է Ներսէս պատրիարքի վերաբերմամբ մի կենսագրական յօդուած, բայց բարձր չէ համարում սպել, թէ և միանգամայն հաւատացած է իր թղթա-կցի անաչ առու թեան և այլն: Այդ առաջնորդի վրա ընթերցող ամեն մարդ այն զարգիւրը կազմեց, թէ դարձուցին բաներ պիտի լինէին այն կենսագրութեան մէջ, որ չը նայելով խմբագրի կողմից արած անպատե-վանացուցիչ ակնարկութիւններին և, այնու-մնացին խոսեմութիւն չը համարվեց տակը: Բայց երբ «Մշակը» կասկած յայտնեց մի այդպի-սի կենսագրութեան լինելու մասին և ասաց, որ եթէ մի այդպիսի բան կար, աւելի լաւ էր սպել նոյնը, քան թէ կասկածելի ակնարկներ անելը, այժմ պ. Ստեփանովինը տալիս է այդ պատաս-խանի նկատմամբ մի բացատրութիւն, որ հայտ-նէ ներքին համարվի իրան: Ընչու արեցինք (այդ բանը), հարկաւոր է բացատրել... Ինչպէս կարող էինք—ասում է պ. Ս. Ս.— սպել կենսագրութիւններ, եթէ մեր ձեռքում չը կան այդ մասին (?) վաւերացրած վկայութիւ-ններ, եթէ բոլոր յայտնի կաթողիկոսացուների կեն-սագրութիւնները լրիւ մեր ձեռքում չեն: Սա արեցի ցոյց է տալիս որ նա, պ. Ստեփան-ովինը, իր ձեռքում չէ ունեցել ոչ Ներսէսի և ոչ մի ուրիշ կաթողիկոսացուի կենսագրութիւնը, բայց եթէ ունենար, անշուշտ կը տարգրէր, ու-րեմն ինչու էր ասում թէ ունի, բայց չէ տպում: Բանից դուրս է գալիս, որ նա երբ սկզբունքով (անվերջ սկզբունքներ) կենսագրութիւնների ղեկ է որոշել և այդ մասին ուղեցել է գրել, ստացել է հէնց այդ միջոցին զանազան գրութիւններ որոյ մէջ բարեկամաբար—մտերմաբար և այլն, խոր-հուրդ են տուած լինում նրան մի «ցածութիւն» անելու: Ինչպէս: Ասած են լինում թէ՛ Ներսէսի մասին աննպատ կենսագրութիւն ստացած կը լինէր, բայց չը տպէր, որովհետև ժողովուրդը նը-

րան սիրում է և դուք դրանով «Նոր-Պարին» մեծ հարուած կը լինէր տուած և այլն... և անս, այդ պիտի խորհուրդները բարկացած գրում է այն ան-նպատ ակնարկները: «Մենք,—ասում է պ. Ստեփանովինը—վերջում գրեցինք այն մի քանի նկատողութիւններ, որպէս զի վերջ յիշած գրու-թիւնների հեղինակները և նրանց համախոհները իմանան (լսեցէք, լսեցէք) թէ մենք ինչու չենք տպում Ներսէսի կենսագրութիւնը և չը կարծենք, թէ մենք իրանց խորհուրդներին ենք հետեւել, որով մեզ անպիտ անտր և ստորացնէինք» («Նոր-Պարի» № 28): Արդեք հասկանալի է այդ: Աւելի հասկանալի չէր լինի ասել.—«մեզ տուած խոր-հուրդներին լսելու չը տպեցինք ինչ որ չու-նէինք», որպէս զի դրանով չը վնասեց «Նոր-Պարին»: Թէ չէ, Ներսէսն ինչ մեղաւոր է որ դուք, պ. Ստեփանովինը, վրդովում էք ձեզ առած այդ խորհուրդները և նրա վրա կասկածանք-ներ յարուցանում. եթէ բարկացաք, ինչու ձեզ խորհուրդ տուողներին չուղեցիք ձեր ակնար-կները և իմաց չարիք թէ նոյն խորհուրդներին հետեւելու հարկը չէք գրում: Չէր ասածներըց հե-տեւում է, որ եթէ ձեզ խորհուրդ տուողներին լը-սած լինէիք, պէտք է «ցածութիւն» անէիք, «ստե-փանովինը» այդ պարզ չէ: Չէր բերած քաղաւա-քից երևում է, որ նրանք ձեզ խորհուրդ չեն տը-ւել Ներսէսի մասին աննպատ բան տպել, այ-սինքն աննպատ կենսագրութիւն հրատարակել: Գուր էլ արդարեւ, չէր հրատարակեցիք ձեզ ու-ղարկած կենսագրութիւնը. ուրեմն, կատարեցիք ձեզ խորհուրդ տուողների խորհուրդը. հետեւաբար՝ սխալ «ցածութիւն» և ստորութիւն» գործած լը-նիք, բայց ձեր դատողութեան: Կամ գուցէ նրանք ձեզ դիտմամբ խորհուրդ էին տալիս չը տպել, կանէր, որ և նրանց ուղեցը կը կատարէիք: Եթէ այդ էր, այն ակնարկներ ևս արած չը պիտի լինէիք, բայց դուք այնպիսի ակնարկներ արեք, որ գուցէ կենսագրութիւն էլ չը բովանդակէր իր մէջ նրանց նմանը. այս դէպքում ևս կատա-րող եղաք ձեզ խորհուրդ տուողների կամաց հետեւապէս աւելուրդ է ձեր պարծնալով թէ՛ ոչ ո-րից խորհուրդ չէք ընդունում: Հշմարիտ, մեզ զար-մայնում են ձեր հակասութիւնները. ձեր գրած-

ները ընդհանրապէս վատ չէին «Մեղուի» մէջ, բայց «Նոր-Պարի» մէջ դեռ ևս մի յօդուած չը տեսանք (ձեր գրածներից) որ ազատ լինէին ամե-նախոշոր հակասութիւններից: «Նոր-Պարի» № 28 ասում էք. եթէ մի կաթողիկոսացուի նպատաւոր կենսագրութիւն տպէք, կը կարծեն, որ նրա կու-սակիցն էք, իսկ եթէ տպէք աննպատը՝ կը կար-ծեն, որ նրա հակառակորդն էք. ուրեմն ոչ միայն և ոչ միայն չէք տպելու. բայց մի ուրիշ համա-րում պահանջում էիք, որ եթէ մէկը հաստատ տեղեկութիւններ և համոզումն ունի՝ պէտք է գրէ և կը տպէք: Գիցուք թէ ես, հետեւելով ձեր հրա-ւերին, գրում եմ ձեզ իմ անկող ձեռագրութիւնը մի կաթողիկոսացուի համար, բայց իմ գրածս ան-նպատ է, թէ և, ճշմարիտ, ինչու չը պիտի տը-պէք. կամ նպատաւոր է միայն, ինչու չը պիտի տպէք. և եթէ չը պիտի տպէք, ինչու էք հրաւի-րում ձեր թղթակիցներին, որ իրանց զիտեցածը գրեն: Գուր պահանջում էք «զոկումնաներով և վկայութիւններով» վաւերացրած կենսագրութիւն-ներ. չատ լաւ. եթէ Ներսէսի կենսագրութիւնը զօկումնաներով և վկայութիւններով հաստատած էր, ինչու չը տպեցիք. եթէ չէր վաւերացրած, ինչու հասկացիք, որ ձեզ մտ կայ նրա մասին թէ և աննպատ, բայց ճշմարիտ կենսագրութիւն. վերջապէս՝ դրա գրողի մասին յայտնեցիք, որ ամենահմուտ, անպատ և ճշմարտասէր ոմն է, եթէ այդպէս էր, էլ ինչ ուրիշ զօկումնաներ էին պէտք նոյնը տպելու: Մի խօսքով, մենք ձեզ չենք հասկանում, պ. Ստեփանովինը. մենք հաս-կանում ենք «Մեղուին» և «Մշակին», «Արարա-տին» և «Արձագանքին», բայց ձեզ չենք հասկա-նում, որովհետև քամի լի օդի նման շուտ-շուտ փոփոխվում էք, գուցէ առանց զգալու: Գուր, ի-րաւ որ, չէք պատկանում ոչ մի ուղղութեան, ոչ պահպանողական, ոչ արմատական, ոչ յատկա-զիմական և ոչ յետադիմական, ոչ աղատամիտ էք և ոչ որ և է ուղղութեան էք ծառայում, այդ այ-սօր մինն էք, վաղը միւսը. մի և նոյն յոյրածի մէջ երևում էք լինել ամեն ուղղութեան հետեւող, հետեւաբար և ոչ մի ուղղութեան ծառայող. այդ լաւ չէք անում: Կը ցանկայինք ձեզ որոշ ուղղու-թիւն, պարզախօսութիւն և համառօտարմու-թիւն:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Հ Ր Է Ա Յ

—Ընդ, լաւ է, լաւ... ԳՖ, սիրելիս, դու ինչ կասես քեզ պաշտպանելու համար: —Ձր... ձե... ձերը գերազանցութիւն, կըմըմա-րովարտասանեց Գիրչէլը:—Ես... մտածեցէք... Գ. Գ. մեղաւոր չեմ... հարցրէք, Գ. Գ. պ. օֆիցերից... Ես ֆակտոր եմ, Գ. Գ. հաւատարիմ ֆակտոր: —Սրան պէտք է հարց ու փորձի կենթարկել: կիսաձայն ասաց գեներալը Նպարտութեամբ գլու-խը շարժելով: —Գէ ինչպէս եղաւ, սիրելիս: —Մեղաւոր չեմ, Գ. Գ. մեղաւոր չեմ: —Սակայն այդ անհաւատալի է: Քեզ, ինչպէս ասում են, շողովութիւն անելիս են բռնել: —Թող տուէք ասեմ, Գ. Գ.—ես մեղաւոր չեմ: —Այս դու ևս նկարել: պլանը, դու թշնամի-ներին խարար տանող ես: —Ես չեմ, ազդակեց միանգամայն Գիրչէլը.— ես չեմ, ձերը գերազանցութիւն: Գեներալը նայեցաւ: Ես ստիպված էի գլխով անել: —Ինչու չէր նայեցաւ Գիրչէլի վրա: —Խարում է, Գ. Գ. ինչքան պ. օֆիցերը հանեց նրա կոշիկը այդ թուղթը: Գեներալը ինձ վրա նայեցաւ: Ես ստիպված էի գլխով անել: —Գու, սիրելիս, թշնամեց կողմից լրտես ես... պատուական... —Ես չեմ... ես չեմ... պատասխանեց խեղը կողքրած հրէան:

—Ուրեմն դու առանց էլ լուրեր էիր հասցնում թշնամիներին: Խոստովանիր... —Ինչպէս կարելի է: —Գու, սիրելիս, ինձ չես լսար: Գու լրտես ես: Հրէան աչքերը փակեց, գլուխը շարժեց և շո-րերի փեշերը բարձրացրեց: —Կախեցէք սրան, մեղաւոր կերպով ասաց գեներալը փոքր ինչ լուրաց յետոյ.—համաձայն օրէնքին: Ինչուեղ է պարոն Ֆեօրը Շլիկէլմանը: Գնային Շլիկէլմանին, գեներալի աղիւտանսին, կոչելու: Գիրչէլը գեղեցիկ, բերանը բացեց, աչքեր չուց... եկաւ աղիւտանսը: Գեներալը տուց նրան հարկաւոր պատուէրներ: Մի բողբ էր ունեւել էլ ցոյց տուց նրան որ երկչուտ գրագիրը: Երկու երկը օֆիցեր հետաքրքրութեամբ նայում էին զէպի սենեակը: —Ինչպե՞ք, Գ. Գ. ասացի ես գեներալին գեր-մաներէն, ինչպէս գրտէի.—արձակեցէք դրան... —Գուր, պարոն, պատասխանեց ինձ ռուսերէն, —ես ձեզ ասացի, անխորձ էր, ուստի խնդրում եմ, լուրեցէք, և աւելի ինձ մի բարկացնէք: Գիրչէլը ազդակեցով ընկաւ գեներալի ոտները: —Գ. Գ. խղճացէք, այլ ես չեմ անի, չեմ անի, Գ. Գ., ես կլին ունեւ... Գ. Գ. ես աղջիկ ունեւ... ներեցէք... —Ինչ արած... —Մեղաւոր եմ... Գ. Գ. արգարև մեղաւոր եմ... առաջին անգամ է, Գ. Գ. առաջին անգամն է, հաւատացէք: —Ուրիշ թղթեր չես տարել: —Առաջին անգամն է, Գ. Գ. կլին... որդի-ըր... խնայեցէք...

—Բայց դու լրտես ես: —Կլին, Գ. Գ... որդիքս... Գեներալին թէպէտ փոքր ինչ շարժեցին այդ խօսքերը, բայց ինչ արած... Համաձայն օրէնքին պէտք է կայտել հրէային, արտասանեց գեներալը կերպարանով խօսքերը, և այնպիսի մարդու դէմ-քով, որ ստիպված է սիրաւ քարացնել, կամենա-լով ամենալաւ զգացմունքները զոհել անողորմ պարտականութեան — կախել: — Ֆեօրը կարելի չէր լինարում եմ այս բանը արձանագրէք, որ... Գիրչէլը միանգամայն զարմանալի կերպով փոփոխեցաւ: Հրէական բնաւորութեան յատուկ և սովորական վրդովված երկչուտութեան փոխարէն նրա դէպք վրա երեկեցան սարսափելի արտայայտութիւններ, սրտ-նեղութեան մէջ ընկաւ, որ լինում է միայն մար-դու մեռնելու ժամանակ: Նա չարաբարում էր, ուղում էր դուրս պրծնել, ինչպէս մի որդայթի մէջ ընկած գազան, բերանը բացեց, խորը հաւաչեց, մինչև անգամ տեղից վեր թռաւ զողողալով, ձեռքերը դէս ու դէն էր շարժում, ասես ուղում էր իրան մտապահելու Նա մի կոչիւով էր. եր-կերպը արտայայտ հազնել: Նրա շորը ձմրոված էր, ֆեւը գլխիցը ընկած... մենք բոլորքեանքս սարսափեցանք: Գեներալը լուռ էր:—Գ. Գ. կրկին սկսեցի ես,—նայեցէք այս թշուաթին: —Ձէ կարելի, օրէնքն է հրամայում, պատաս-խանեց գեներալը կամաց-կամաց և առանց վըր-դովմունքի,—ուրիշներին թող օրինակ լինի: —Ի սէր Ատուռոյ... —Պ. կոռնէտ, դիպեցէ ձեր տեղը, ասաց գենե-րալը և հրամայողական ձեւով ցոյց տուց ինձ դուռը:

Ես գլուխ տուի և դուրս եկայ: Բայց որովհետև ևս ոչինչ բանի վրա չէի հակում, կանգնեցայ գե-ներալի տան մտ: Երկը—երկը լուրեցի յետոյ երեկեցաւ Գիրչէլը Սիլեակայի և երկը գլխուր-ների հետ: Խեղճ հրէան թմրած էր և հազիւ կա-րողանում էր քայլերը փոխել: Սիլեակայն մո-տիցս գնաց, մտաւ վրանը և շուտով յետ դարձաւ ձեռքին մի կտոր թղթ բռնած: Նրա կախիտ, բայց ոչ չարամիտ դէմքը վրա արտայայտեցաւ անսո-վոր կարեկցութիւն: Թողը տեսնելով, հրէան ձեռքերը դէս ու դէն տարաւ, նստաւ և սկսեց լաց լինել: Չիտուրները լուռ ու մունջ կանգնած էին շուրջը և բարկացած գետնի վրա էին նայում. նա շարունակ լաց էր լինում, ինչպէս երեխայ, անգամ չէր նայում վրաս: Թողը դուռը, գնացի վրանս, ընկալ գորդի վրա և աչքերս փակեցի: Յանկարծակի մէկը շտապելով և աղաղակով վրանս մտաւ: Գլուխս բարձրացրի—տեսայ Ստեփան: Նրա երեսը տեղում չէր: Ընկաւ ինձ վրա և ձեռիցս բռնեց: —Գնանք, գնանք, գնանք, կրկնում էր նա, կարծես, քեչ էր մտած, որ խեղդվէր: —Ուր, ինչու համար, մտանք այստեղ: —Հօրս մօտ, հօրս մօտ, շուտով... ազատիք նրան... ազատիք: —Ինչ հայր... —Իմ հօրս մօտ: Նրան ուղում են կախել... —Ինչպէս, միթէ Գիրչէլը... —Իմ հայրս է, ես քեզ ամեն բան կը պատմեմ յետոյ, շարունակեց նա, յուսահատութեան մէջ կոտ-րատելով էր ձեռքերը,—միայն գնանք... գնանք...

Իսկ ինչ վերաբերում է այն հասանելիության, որ «Նոր-Գարի» և «Մեղու» խմբագրություններն են շատ ավելի լայն միջավայրում հարմարվելու և արագորակապես հասնելու հասարակությանը, այդ դրու- թեան հետևանքը թե՛ ինչ կարող է լինել, թող ի նկատի ունենան այս ևս, որ կաթողիկոսի ընտ- րութեան մասին կազմած հրահանգի և: զվրի 25 յօդուածումն ասած է. «Ի ծանուցանել անուան կանգնեցողին (կաթողիկոսական), իրաքանչիւր որ ի ներկայ եղեալ Անդամոցն, որոց են իրա- ւունք ընտրութեան, յայտնէ ի ձայն թէ՛ ար- ժանի համարի արեւոք զառաջադրեալ անձն աս- տիճանի ծայրագոյն պատրիարք կաթողիկոսին թէ՛ ոչ. այս արժանատրուան արտասանի միով բա- նիւ. ընտրեմ, կամ ոչ ընտրեմ...»

Այս յօդուածից երևում է, որ ընտրութիւնը չէ լինում զարմանի քուէարկութիւնով, այլ բաց և յայ- նով:

Թէ որքան յարմար կամ անյարմար է այդ ձևը, թողնում ենք ընթերցողի դատողութեան: Մի և նոյն յօդուածի ծանօթութեան մէջ ասած է. «Կատողութիւնը բացակայ պատգամաւորացն, «ոչ ընդ ունին ի հաշիւ ձայնիցն, զի որով- հետև ըստ գորութեան 17 յօդ. բարձրագոյն համար հաստատեալ ի 1836 ամի կարգադրու- թեանն յաղագս կատարութեան գործոց Հա- յաստանաց եկեղեցոյ ի Ռուսաստան, ընտրու- թիւնն պարտի լինել միայն յառաջիկայ պատգամաւորացն» («Վարատ» 1883 ամ. Օգոստոս): Այստեղից պարզ երևում է որ միմյան ներկայ եղող պատգամաւորները ձայ- նից բազմութիւնովն է ընտրվում կաթողիկոսը. իսկ բացակայ եղողները գրաւոր դատողութիւն- ները կամ ձայնը հայտնի մէջ չէ մտնում: Այս մասին թող մտածեն պատգամաւորները և չը բա- ւականանան լոկ դրաւոր դատողութիւնով:

Ս. Բ. Ն.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Փետրվարի 26-ին

Այսօր, ժամի 11-ին, թեմական առաջնորդի հրամա- նով, Երևանի միայն երեք եկեղեցիներում կատար- վում է պատգամաւորների ընտրութիւն նորընտիր կաթողիկոսի համար: Պորոս-Պետրոս եկեղեցու ժամատը լինելով, թող ներվի ինձ մի երկու խօսք այդ եկեղեցում եղած ընտրութեան մասին:

Սուրբ պատարագից յետոյ այդ եկեղեցու ժա- մատըները գնացին հայտնեան դպրոցի դահլիճը, որտեղ քահանայ հայր Առաքանապետը բացից նրանք յայտնեալ ժողովի նպատակը, որից յետոյ ամենքնն բաժանեցին թղթի ծրարներ երեք պատ- դամաւորների անուն գրելու: Չայնրի առաւելու- թեամբ ընտրվեցին պ. պ. Ռուբէն Զաւլաւանց, Վասիլ Նշիպարեանց և բժիշկ Լևոն Տիգրա-

Վրանից դուրս եկանք: Գաշտում, մի ծանապար- ճի վրա, որ տանում էր դէպի մի ցարասի, ժողով- վել էին շատ զինուորներ... Սառան լուս մատ- նանիչ արաւ ինձ...

— Կանգնիր, ասացի ես յանկարծակի,— ո՞ր ենք վաղուս: Չինուորները ինձ չը լսեցին:

Սառան շարունակ քաշում էր ինձ ձեռքս... խոստովանվում եմ, գլուխս պտըտվում էր:

— Լսիր, Սառան, դիմեցի առջևս,— ինչ օգուտ վա- զել այնտեղ: Լաւ է ես կրկին կը գնամ զեներալի մօտ:

— Գնանք միասին, դուցէ՛ այն ժամանակն աս կը ներէ:

Սառան միանգամից կանգնեցաւ. և ցնդվածի նման վրաս նայեցաւ:

— Ի սեր Աստուծոյ, Սառան, հասկացիր ինձ: Ես քո հօրը ներել չեմ կարող, կարող է գեներալը: Գնանք նրա մօտ:

— Նրան կը կախեն, ասի քաշելով ասաց աղ- ջիւրը... յետ նայեցայ... Գրագիրը կանգնած էր ին- ձանից մի քիչ հեռու:

— Իվանով, դիմեցի նրան,— վաղիր, գնա նրանց մօտ, հրամայիր, որ սպասեն, սաս, ես գնում եմ զեներալի մօտ ներողութիւն խնդրելու:

— Լսում եմ, պարոն:

Իվանովը վազեց:

Մեզ ներս չէին թողնում զեներալի մօտ: Ի դուր էի ես խնդրում, համոզում, մինչև անգամ սկսե- ցինք միմեանց հայտնել: Ի դուր էր թշուառ Սա- րան մազկըր փետում և ընկնում պահապանների վրա, դարձեալ մեզ ներս չը թողին:

Սառան զփված նայում էր շուրջը, երկու ձեռքով ընտում էր գլուխը և ուղիղ վազում էր դաշտը— հօր մօտ: Ես էլ նրա ետևից: Մեզ վրա նայում էին զարմացած...

նեանց: Ընտրութիւնը վերջանալուց յետոյ մի հարց ծագեց, արդեօք աւելի լաւ չէր լինի մեր ընտ- րած պատգամաւորներին յայտնելնք մեր ցանկալի կաթողիկոսացոյի անունը և զրել այդ արձանա- գրութեան մէջ: Պ. Ս. Բէգ-Նաղարեանը կանգնեց դահլիճի մէջ և իր հսկայ ձայնով գոչեց՝ «պարոն- ներ, ո՞ւմ էք ցանկանում ձեզ կաթողիկոսացուս:— «Ներսէս Պատրիարք, զըրզայ դահլիճը, եթէ սըր- բազանը հրաժարվի, Խորիսեան հայրիկը, դուստրին միաձայն: Թէև այս վերջին իրողութիւնը նախա- դաս հայրը հրաժարվում էր արձանագրել, բայց հազիւ կարողացան համոզել նրան զբրա անվա- սակար լինելը: Այսպէս վերջացաւ ժողովը և ա- մենք ուրախ տրամադրութեամբ դուրս եկանք զարօցի դահլիճից, ուրախ ասացի, որովհետև կար ժամանակ, երբ մի հասարակական պաշտօն մէկին տալ էին կամենում, ընտրում էին հաստատիր աղանե- րին: Այս, բունովի քաջողներն և տերողութեայ համ- բողներն դարը անցաւ, նոր սերնդի դրօշակը փայ- լում է հրապարակի վրա. անցաւ այն ժամանակը, երբ վանքի խցում զիչեր ցերեկ Սաղմոս Նարեկ կարգացող սքեղան սրբի տեղ էր պաշտում. ներ- կայումս պահանջվում է, որ հայ հոգևորականը պէտք է քաղաքագէտ լինի, թարմ ուղեղով, վեր- ջապէս, նա ժամանակի ոգու համեմատ զարգա- ցած լինի: Եւ, ճշմարիտ, երբ մի ժողովուրդ ճա- նաչում է իր մէջ գանձուղ ճշմարիտ դործողներին, որի ազնոցոյց սեռանք այս օրուան ժողովում, մի ժողովուրդ, որը արդէն ուղք է դրել իմացականու- թեան անդուղքի առաջին աստիճանների վրա, ևս կարծում եմ այդ ժողովուրդի ապագան կիսով չափ ապահովված:»

Միակ անձը, որ պէտք է ներկայ լինի ամե- նայն հայոց կաթողիկոսի ընտրութեանը էլ միաձ- նում կրեանի և նրա նահանգի կողմից, այստեղ մատնացոյց են անում Ղահրաման-աղա Մէլիք- Աղամալեանի վրա: Պարոնը Գեորգ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ նայեալս ներկայ է եղել:

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ԱՍՏԱՆԻՑԻՑ

Փետրվարի 22-ին

Որքան «քեանտութիւն», անյաշուրթիւն, տըն- բութիւն պատած լինեն մեզ, այնուամենայնիւ տարվայ շրջանի մէջ կան մի քանի օրեր, որ այդ ամենը խլացաւ մոտ աշխուտ են մեր մտքերից.— այդ օրերը բարեկենդանի եօթնեակն են: Հայոց հին հեթանոսական կրօնի ժամանակից սահման- ված այդ սանդղարանտական տօնը հիմայ էլ կատարվում է ամեն տեղ, ինչպէս և Ախալցխա- յում, նոյնչափ եռանդով, զեղխութիւնով, շուայ- լութիւնով և ազահութիւնով: Այդ օրերում բաղ- դաւոր աղայի պալատից սկսած մինչև յետին աղ- ջատի խրճիթն էլ շրջապատված են շուայութեան

Մենք վաղեցիկը զինուորների մօտ: Նրանք շուրջ կազմեցին և, երեսակայեցեք, պարոնայք, ծիծաղում էին խեղճ Գիրչէլի վրա: Ես բարկացայ և աղաղակեցի նրանց վրա: Հրէան մեզ նկատեց և փաթկաթկեցաւ աղջկայ վզիցը: Սառան էլ նրան զրկեց: Խեղճ ողորմելին կարծում էր, թէ նրան ներել են... նա արդէն չնորհակալութիւն էր մատուցանում... ես հեռացայ փոքր ինչ...

— Չերդ ազնուութիւն, աղաղակեց նա և ձեռս սեղմեց,— ինձ չեն ներել:

Ես ըր պատասխանեցի:

— Ո՛ր:

— Չերդ ազնուութիւն, փնթփնթաց նա,— նայե- ցեք, ձերդ ազնուութիւն, նայեցեք... սա նա է, սա այն աղջիկն է, դիտեք,— սա իմ, իմ աղջիկն է:

— Գիտեմ, պատասխանեցի և կրկին յետ դարձայ:

— Չերդ ազնուութիւն, բացաբանեց նա,— ես չէի հեռանում վրանից: Ես բոլորովին... կանգնեցաւ և մի բողբ աւերը փակեց:— Ես ձեր փողն էի ու- ղում, ձերդ ազնուութիւն, պէտք է խոստովանած, ձեր փողը... բայց բոլորովին...

Ես լուս էի: Գիրչէլը ինձ զգուելի էր, և ինքը աղջիկը, նրա... գործակիցը...

— Բայց այժմ, եթէ դուք ինձ աղաւթեք, արտա- սանեց հրէան կամայ,— ես կը հրամայեմ— ես... հասկանա՞ւ եք... ամեն... ամեն բան ես կանեմ...

Նա դողդողում էր որպէս տերև, և շուտ շուտ դէս ու դէն էր նայում:

Սառան լուս էր և սիրով զրկում էր նրան:

Մեզ մօտեցաւ աղիւսանորդ:

— Պ. կուռնետ, դիմեց ինձ,— նորին գերագան- ցութիւնը հրամայեց, որ ձեզ կալանաւորենք: Բայց

պտուղեղով: Թողնե՛ք բարեկենդանի աւերուածքի մանրամասն նկարագրութիւնը, չը վրդովե՛ք թըղ- թախաղամոլներին, որոնք մեծ պատի մէջն էլ երջանիկ են և անհոգ նուիրական կանաչ սերուն- ները շրջապատելիս, մենք մի ընդհանուր հայեացք ձգենք մեր առօրեայ անտեսական կեանքի վրա: Շատ ցաւալի է նկատել, որ մի ժամանակ իր «Գէորգութիւն» (ինչպիսիք ինչ) օրինակելի Ա- խալցխայի գաղթական հայ ժողովուրդը, վերջին ուսու- թիւրքական պատերազմից յետոյ, ոչ միայն բարեկենդանին, այլ մշտապէս շուայ, անհոգ և անհետատեսութեամբ է վերաբերվում իր նուիրա- կան միջոցներին: Նորմոծութիւնը (մօղա), նմանախորթիւնը հրապարակած են ամեն դա- սակարգի մէջ. մտէք ինչո՞ք ենք, հարսանիքնե- ընում և դուրէ՛ք կարող որոշել հարուստը աղքատից.— ամենքը հասարակապէս պնդված են թանգաղին զարդերով, ուկով և դահլիճներով. նայեցե՛ք տան կա- կարատիքին, սեղանի կերակուրների տեսակներին, ընդհիլքներին, քաղցրաւէնքներին, նոյնն են ինչ որ ապահովված կալուածատիրոջ տան մէջ: Այն, ցաւալի է, և եթէ արմատախլ անեաւ միջոցներ չառաջարկվին կանխօրէն, շուայութեան հետեղ- ները դիտակցարար թէ անդիտակցարար մասնակե- լու են զփաղը հետեղներին. աղքատութիւնը իր սղայի թեկնով բաղխելու է այդ գոհերի զը- ները և այնուհետև դժուար է լինելու բուժել, սղի գոհել նոցա ցաւերի դէմ: Վերջապէս անցաւ բա- ընկեղանքը, այժմ ջերմեանը քրիստոնեաները իրանց միեկիտարութիւնը և հոգոյ անդորրութիւնը գտնում են եկեղեցու յարկի տակ. ցանկալի է, որ մեր հայր սուրբերը իր զրկելին ժողովուրդին իրանց փոխաւէտ կենդանի խօսքերից, եկեղեցու բեմից քարոզած պատգամը միշտ նուիրական է մեր կը- րօնասէր ժողովուրդի համար և մեծ ազդեցու- թիւն կուռնեայ մեր թէ անտեսական և թէ բա- ռոյական կեանքի վրա: Մեծայայտ ենք, որ քաղա- ջիս հոգևոր յաջողը հայր Սանասարեանցը այդ անմիջական պահանջը լրացնում է իր խոհական կարգադրութեամբ:

Բարեկենդանի շարաթում հայրէն երեք ներկա- յացումներ տրվեցան Ախալցխայում, մինք ու- սուցչական խմբից և երկուսը տեղական սիրողնե- իր նորակազմ խմբից. խաղացին «Աւ հողեր», «Վրչակ Բ.» և «Վարդանանց պատերազմը» ող- բերութիւնները, «Փշատ» (Տէր-Աբրահամանցի) և «Կրթի-կընթ» կատակերգութիւնները: Վարդա- նանց յիշատակի օրը նորակազմ խմբի ներկայաց- ղած «Վարդանանց պատերազմը» բաւական յա- ջողակ էր և զեղեցիկի տպագրութիւն թողեց հան- զիսականների վրա. խաղացողներից յետոքը ար- ժանացան բուռն ծափահարութեամբ: Չը նայելով «արիստոկրատիայի» բացակայութեան, այնուամե- նայնիւ շատիճանաւորների կրթութիւնը ահագին դահլիճը լինել էր բազմութեամբ և շատերին էլ

զուր... Նա լուս նշան տուեց զինուորներին, որ հրէային... շուտով սրան:

Միեկվան մօտեցաւ հրէային:

— Ցեօդը կարծիք, ասացի աղիւսանորդ (նրա հետ եկել էին չորս—հինգ զինուոր),— հրամայե- ցեք գոնէ, որ այս աղջկան տանեն:

— Ի հարկէ: Համաձայն եմ:

Թշուառ աղջիկը հազիւ շունչ էր քաշում:

Գիրչէլը միթմիթաց ինչ որ աղջկայ ական- ջին երբայական բարբառով:

Գժուարութեամբ զինուորները կարողացան Սա- րային հանել հօր գրկից և զգուշութեամբ նրան զբան զայլ հեռու տարան: Բայց յանկարծ դուրս պրծաւ աղջիկը նրանց ձեռքից և վազեց Գիրչէլի մօտ... Միեկվան բունց նրան, Սառան զբա- ձեռքիցն էլ դուրս պրծաւ, նրա դէմքի գոյնը փոխ- վեցաւ, աչերը փայլեցին, ձեռքը մեկնեց:

Գրուր յետ ընկաւ... վայր ընկաւ ինքն էլ դե- սնի վրա... նրան բարձրացրին ու տարան:

Չինուորները բունցին Գիրչէլին: Այն ժամա- նակ ես հասկացայ, ինչու էին ծիծաղում նրա վրա, երբ Սառայի հետ եկայ բանակից: Արդարև ծիծաղելի էր, թէպէտ և սարսափելի էր նրա վի- ձակը: Կնոջից, աղկանից, ընտանիքից հեռանալու չարչարող ու տանջող վիշտը հրէայի դէմքի վրա արտայայտվել էր այնպիսի տարօրինակ, հրէշաւոր չարժվածքներով, աղաղակներով ուստատմներով, որ մենք ականայ կը ծիծաղեինք, թէպէտ և զգում լինէինք, սարսափելի զբացմունք ունենայինք,— խեղճ վախից իրան կորցրել էր...

— Այ, այ, այ, աղաղակեց հրէան.— այ, այ, — սպասեցեք. ես ձեզ կը պատմեմ, դուք ինձ ճա- նաչում էք: Ես ֆակտոր եմ, հաւատարիմ ֆակ-

բացասեցին ազատ տեղ չը լինելու համար: Այստեղ ականայ ստիպված եմ մի քանի խօսք ուղղել մեր ինտելիգենտ ուսուցչա- կան խմբին:— Անհասկանալի է, թէ ինչն էր պատճառը, արգելադրվել, որ մեր յարգելի վար- ժապետները մինչև անգամ զբացան թատրոնի պատմական-ողբերգական շարերը և դեկորացիաները ժամանակաւորապէս զիջանել նորակազմ խմբին, մինչդեռ վերջինը անշահանքիւրութիւնով առա- ջարկել էր արդիւնքը սովորապէս յատկացնել ուսումնարանիս. ուսուցիչները իրանց սեփակա- նութիւն չէին կարող համարել այդ շարերը, քանի որ մեծ մասը ստացել էին իրանց նախորդներից՝ հին սիրողներից. չը զիջանելով նորակազմ խմբի ընտրութեան և սրտունջի, իսկ նորակազմ խում- բը հարկադրված էր յատկացնել արդիւնքը յօ- զուտ բեմական պատրաստութեան, շարերի և այլն զանազան աւելորդ ծախսերը ծածկելու համար, պէտք է ասել, որ անձամբ չէի համակրում նոր խմբի կազմակերպութեանը և միշտ աշխատում էի միացնել թէպէտ և չէի մասնացում նոցա խա- ղերին ոչ մի խմբի հետ:

Ամսոյ 26-ին կատարվելու է այստեղի մի պատգամաւոր ընտրութիւնը, որը մասնակցելու է թիֆլիսում ընդհանուր մի թեմական ներկայա- ցուցչի ընտրութեանը:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԳՈՒԹԱՅԻՑԻՑ

Փետրվարի 27-ին

Վիճակային առաջնորդ Սրբաղան Արիստակէսը լաւ ըմբռնելով ս. Գրիգորի ապագայ գահակալի և ամբողջ հայ ազգի վեհապետի փեսն նշանակու- թիւնը՝ Գութայիսի հայ ժողովրդականաց ևս անտես չը թողեց ապագայ կաթողիկոսի ընտրու- թեան մասնակցելու իրաւանց մէջ, որը սկզբուն- ղով Հայաստանեայց եկեղեցին ի սկզբանէ պահպա- նել է առանց գնահատանելու, թէ և մինչև օրս մենք այդ փափով խնդրում անտես ենք եղած (չեմ իմանում թէ ինչու համար): Այսու աղաքաւ- ըստ հրամանագրութեան վիճակային առաջնորդի՝ Գութայիսի գործակալ, Գ. ա. ք. Եսաբաւանը հրաւեր կարգաց տեղոյս հայ հասարակութեան մօտ երկու անգամ այդ անհրաժեշտ ժողովման մասին. ուստի ամսոյ 26-ին, կիրակի օրը, հոգե- շար մ. պատարագից յետոյ, հաւատացելոց խում- բանութիւնը զիմեց դէպի երկեսեռ ուսումնարանի ընդգրծակ դահլիճը: Ժողովը օրինակել էր և խաղաղ, որտեղ հասարակութիւնը զիտող հայեաց- ղով որոնում էր մի այնպիսի անհատի, որը ա- ռանց աչաւելով թիֆլիսում, մարտ ամսին ըն- տրել ընդհանուր թեմական պատգամաւորի ար-

տուր: Չեւք մի տար, թող սուէք էլի մի բողբ, մի վաչկեան, էլի սպասեցեք: Թողեք ինձ, ես աղքատ հրէայ եմ: Սառան... ո՞ր ես, Սառան: Ո՛հ, ես գի- տեմ, նա կըլարտիր-պարուչիկի մօտ է (չը գիտեմ, ինչու համար ես ինձ տուեց այդ աստիճանը, որ բոլորովին չը կայ): Պ. կըլարտիր-պարուչիկ, ես չեմ հեռանում վրանից: զինուորները սկսեցին բունել Գիրչէլին տանելու... ես կնձկնձաց և դուրս պրծաւ նրանց ձեռքից):

— Չ. Գ. ողորմեցեք ընտանիքի տէր թշուառ հօրս: Ես տաքը ոսկի դրամ կը տամ, տան հինգ կը տամ, ձերդ գերազանցութիւն... (Հրէային ցարատու մօտ քաշեցին):

Ողորմեցեք, ինչպեցեք, պ. կըլարտիր-պարուչիկ, ձերդ պայծառափայլութիւն, պ. օրէր-գեներալ և զվստար չէֆ:

Նրկաթի օղակը ձեցին հրէայի վզին. աչերս փակեցի ու սկսեցի վազել:

Երկու շաբաթ պատժված բանտում նստած էի. ինձ ասացին, որ թշուառ Գիրչէլի այրին եկել է ինձ մօտ մահապարտի շարերը ստանալու: Գնե- րալը հրամայել է, որ հարկը ուսուրիլ տան: Սա- րային այլ ևս ես չը տեսայ: Ես վրաբերված էի. ինձ ուղարկեցին հիւանդանոց և երբ ես առողջացայ Գանցիլը արդէն անձնատուր էր եղած,— և ես հա- սայ իմ զօրքին Ռէնի ամբերուս:

Բ.

ժամաւորութիւնը կարողանաք գնահատել և այն-  
պէս քուէ տար: Աւերորդ չեմ համարում այստեղ  
յիշել մի քանի աչքի ընկնող կարգադրութիւններ,  
որոնք չնորհիւ արժ. հ. Կարալեանցի տեղի ունե-  
ցան: Ինչպէս վերև յիշեցի, հ. Կարալեանցը մտ  
երկու անգամ այդ առթիւ ժողովրդեանը մանրա-  
մասն կերպիւ քարոզներ մէջ բացատրեց ս. Գրի-  
գորից սկսած մինչև վերջին հայրապետի մեր  
մէջ ունեցած նշանակութեան մասին և ընդհա-  
կառակը՝ մեր պարտաւորութիւնները դէպի ս.  
Իջման տեղը: Կրօնական աւերորդ չը համարեց ժո-  
ղովման բողոքի և կարճատեւ կերպիւ յիշեցնել  
թէ հայրապետաց նշանակութիւնը ներկայումս  
մեզ համար և թէ երկրորդական պատգամաւորաց  
նշանակութիւնը: Ժողովը տեղեց մտ 2 1/2 ժամ,  
նախագահում էր ինքը հ. Կարալեանցը: Այստեղ  
աչքի առաջ ունենալով դանաղան խրատումներ,  
որոնք անդադար լրագրական սինակներում մեր  
աչքին էին ընկնում, տէր-Գառիթը վաղաբոյն դեռ  
մի տեսակ հրաւիրական զեկուցումներ մասնաձև  
տուեց քահանայից, որպէս զի հասարակութիւնը  
առիթ չունենար արտօնչներ բարձրացնել  
և զեկուցման թերթի տակը ստորագրել  
էին տալիս: Ժողովման դահլիճում բաժանել  
տուեց տոմսակներ, որտեղ պիտի նշանակէին մի  
ընտրելի ազգաժողով և իւրաքանչիւր տոմսակա-  
տուի ազգանունը նշանակում էր, որպէս զի խա-  
ղախութիւններ չը պատահէին. հաշուեցին և տե-  
սան որ տոմսակներ թիւը հաւասար էր տոմսա-  
կատարաց թիւին. այս էլ չը մտածանք որ միայն  
հասարակութիւնն էին մասնակցում և ոչ թէ անկող  
հիւրերը: Քուէարկեցին երեք անձանց և ձայնից  
բազմութեամբ Քուէարկեցին հասարակութեան կող-  
մից կաթողիկոսական գլխաւոր աշխարհական  
պատգամաւորի ընտրութեան իրաւունքը արկեցաւ  
մեծ. պ. Ա. Ս. Յովնանեանին, որը ներկայ չէր  
ժողովին: Յոյս ունեցը, որ պ. Ա. Յովնանեանը  
ժողովրդական բարեկուսակի տուած իրաւունքը  
արդար կերպիւ կը գործ դնէ:—Սոյն ամսի 16-ին,  
Քուէ. հ. Երկուսու ուսումնարանը հանդիսարար  
կերպիւ տուեց Վարդանանց զորավարաց յարգելի  
կրօնական տօնը:

**ՆԱՄԱԿ ԳՈՒՆԵԹԻՑ**

Փետրվարի 27-ին

Քանի որ մեր լրագրութեանը զբաղեցնող հար-  
ցերից մէկն էլ այսօր հայրենակ Քաղաքներում  
կատարվող պատգամաւորաց ընտրութեան հարցն  
է և մեր օրագրներում հրատարակվող նամակները  
կամ լուրերը, ըստ մեծի մասին, այդ հարցին են  
լինում նուիրված, կարծեմ, ակնորդ չէր լինի, ե-  
թէ մի քանի խօսք էլ են ասեմ այս օրերս Գու-  
շէթի մէջ կայացած պատգամաւորի ընտրութեան  
առթիւ, որը և իր տարօրինակ ձևով, կարծեմ, որ  
չատերի ուշագրութիւնը ևս պիտի հրաւիրէ իր  
վրա:

Ամբողջ երկու ամիս սրանից առաջ տեղս ըս-  
տացվել էր սրբազան առաջնորդի պաշտօնական  
զրուցիւնը, որով պատուիրում էր տեղիս գործա-  
կալին, որ Գուշէթի և նրա գաւառում գտնվող  
գիւղերի կողմից մի պատգամաւոր ընտրի, որ մար-  
տի 24-ին ընդհանուր թիւնական պատգամաւորի  
ընտրութեանը մասնակցի թիւֆլիսում: Գուշէթեցիք,  
ինչպէս և միւս հասարակական և եկեղեցական գոր-  
ծերում, այնպէս և այս համազգային մեծ խնդ-  
րում փայլեցին իրենց յատուկ, վերին աստիճանի,  
անտարբերութիւնը: Չը նայելով որ տեղիս գա-  
ւառագետքը, նահանգագետքի ստացած պատերի  
համաձայն և հ. գործակալի ինքնաօրը, մի ամ-  
բողջ շաբաթ առաջ տանապետներ ձգած խանու-  
թէ խանութ ծանուցում էր տալիս քաղաքիս հայ  
հասարակութեան, որ նշանակած օրը (ամիսի 12-ին,  
կիրակի օրը) դան կեկեղեցի, չը նայելով որ հ.  
գործակալը ևս, ոտախկնաց տուած այդ հրաւերով  
էլ չը բաւականանալով, (երևի իր ժողովրդի ան-  
տարբերութեանը ակել լաւ տեղեակ լինելով),  
այդ շաբթին առաջնորդից ստացած հրահանգը ձե-  
ռին անձամբ խանութէ խանութ շրջելով հրաւիրեց  
հասարակութեան, որ այդ օրը անպատճառ չնոր-  
բերեն եկեղեցի, չը նայելով, ասում եմ, ամբողջ  
շաբաթով առաջ արած այդ աշխատութեանց, այդ  
գոռում կոչումին և Գուշէթի 140 տնից ակելի հայ  
ժողովրդին, (գիւղերի մասին խօսք անգամ ակե-  
լորդ եմ համարում յիշելու, նրանցից մի մի  
ներկայացուցիչ անգամ չը կար այդ օրը ե-  
կեղեցում), քանի մարդ էր չնորհ բերել ե-  
կեղեցի, ընդամենը... ճշմարիտն եմ ասում

յիշել անգամ ամաչում եմ. ընդամենը 11  
մարդ: Եւ այդ անձամբ համարեցի: Պատարագիչ  
քահանան չու. է գալիս դէպի ժողովրդականքը,  
որ ընտրութեան առթիւ քանի մի խօսք ասի,  
բայց եկեղեցին նրանից դատարկ գտնելով և նրա  
ամեն մի սրանի տակ մի մի զոյգ մարդիկ միայն  
նկատելով, մոռացութեան է տալիս ընտրութեան  
գործը, և, զորս դու պատուիրեցիք, անարգել, նա-  
խատել է սկսում եկեղեցու ընթաց դուշէթցիներ  
մի այսպիսի ծայրահեղութեանը հասցրած անտար-  
բերութիւնը: Չը մտածանք դեռ ևս ամօթով յի-  
շելու և անի, որ այդ օրը այսպիսի ըստ երևոյ-  
թիւն, ակելի էին հետաքրքրվել ընտրութեան գոր-  
ծով, քան մեր գուշէթցիները: Քանի մի վրացի  
տիկնայք և օրիորդներ, նոյնպէս և Չ առաւ աստի-  
ճանաւորներ եկել էին այդ օրը հայոց եկեղեցի  
խկապէս պատգամաւորի ընտրութեանը հանդի-  
սատես լինելու, որոնք սակայն հանդիսակա-  
նաց թիւից երևի և կայանալիք փառաւոր ըն-  
տրութիւնը գուշէթցիներով դեռ պատարագը չա-  
ւարտած, քիթները վեր քաշած, դուրս գնացին  
եկեղեցուց, ի հարկէ, մտքներում անշուշտ մեր  
չերմտանող գուշէթցիները հետաքրքրութիւնն ու  
գործունէութիւնը գովաբանելով:

Եւ յիշելով, որ էին այդ օրը պ. պ. Քուշէթ-  
ցիները: Առանց խղճահարկելու, ձեռքս սրտիս  
գրած, կարող եմ խոստովանվել, որ անշուշտ  
գինեմներում: Բարեկեցական օրեր էին, դրանք  
էլ այդ ընթացի երևի իրանց պաշտելի Բաբոսին  
էին ջերմութեամբութեամբ ջերմ պատարագ մա-  
տուցանում, եթէ ոչ, այլ կերպ սրան բացատրու-  
թիւն տալ չեմ կարող: Եւ այսպէս, յիշեալ օրը  
ընտրութիւնը չէ կայանում և ևս սպասում էի թէ  
փոյթ չէ, այս անգամ չը յաջողվեցաւ, երևի  
երկրորդ անգամ ևս ծանուցում կը տրվի և այս  
անգամին ակելի խիստ միջոցներ զիմելով մի  
կերպ ընտրութիւն կը կայանայ: Բայց որքան մեծ  
եղաւ դարմանքս, ընթերցող, կը յանկարծ լրում  
եմ թէ՛ գուշէթցիք, էլ երկրորդ գլխացականքի տե-  
ղիք չը տալու համար, իրար մէջ խորհրդակցե-  
լով յայտնի բան է խանութներէ մէկում, համո-  
զել են և տեղիս գործակալին, որ մի թուղթ գրի  
իրանց կողմից թէ՛ «մենք գուշէթցիներս ընդ-  
հանուր համաձայնութեամբ ?!!! ընտրեցինք մեր  
միջից երեցիտն պ. Մ. Տէր-Տէրեանցին...» մի  
մարդու, որը շատ անգամ, իր անձնական գործն-  
քի համար, ամբողջ ամիսներով բացակայ է գտն-  
վում ինչպէս Գուշէթցիք, այնպէս և Թիֆլիսից և  
որ գլխաւորն է, առանց նախօրք սրա համաձայ-  
նութիւնը ևս այդ մասին սասանալու: Իսկ այնու-  
հետև իրանք այդ «ընտրողական թերթը» խանու-  
թէ խանութ շրջելով ստորագրել կը տան և մնա-  
ցած գուշէթցիներին, որով և գործը, առանց կը-  
կար գլխացականքի, կատարված վերջացված կը  
համարվի:

Փառաւոր ընտրութիւն չէ, ընթերցող: Չեմ կար-  
ծում, որ ամբողջ հայոց ազգի մէջ նմանօրինակ  
մի ընտրութիւն էլ կայացած լինի կամ զուցէ կա-  
թողնում, ընթերցող, դատելու թէ՛ որքան յաջող  
և արդարացի կարող է համարվել մի այսպիսի ըն-  
տրութիւն, որի երկուսիցը ներկայ տողերովս  
խկուսեամբ ներկայացրի այստեղ:

Այս այսպէս լինելուց յետ, ինչ կարող եմ ա-  
սել այս օրերս ընդհանուր հայոց ազգից յարգված  
և ամենայնպէս գիւղում անգամ հանդիսարար կեր-  
պով կատարված մի տօնի հայոց հաւատի  
նահատակ ս. Վարդանանց նահատակութեան յի-  
շատակը տեղս չը յարգելու առթիւ: Պատարագման  
քահանայք այդ օրը մի հասարակ հոգեհանգիստ  
կատարեց անգամ լինայեցին այն նահատակների  
յիշատակին, որոնք ամբողջ 14 դար սրանից ա-  
ռաջ իրանց վերջին կաթիլ արիւնը անգամ  
չը լինայեցին մեր սուրբ կրօնի փրկութեան  
համար:

Ուսումնարանիս վարչութիւնը պարտ է համա-  
րում իր խորին չնորհակալութիւնը յայտնելու պ.  
Գրիգոր Յ. Միրզոյեանին ներկայ 1884 տարուայ  
«Աղբիւր» մի օրինակը տեղիս ծխական դպրոցին  
յատկացնելու համար: Աժժ ուսումնարանն ստա-  
նում է «Մշակ», «Նոր-Գար» և «Աղբիւր»: Ծառցան-  
կալի էր, որ մեր ուսումնասէր պարոնները մէջ  
դանուէին և մի քանի անհասներ, որոնք բարե-  
հաճէին արքայտիկ ուսումնարանին անուսով գրվել  
և մեր միւս հայ շաբաթթերթերին և ամսագրի-  
ներին:

Գր. Խօջամիրեան

**ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ**

Այսուհետև «Մշակը» կը հրատարակվի չորեք-  
շաբթի և շաբաթ օրերը:

Չարմանալի են հայերը: Երբ լրագրի ապառիկ-  
ներ են ուղարկում, մեծ մասամբ մասնաւոր մարդ-  
կանց, ճանապարհորդների ձեռքով են ուղարկում,  
իսկ սրանք գալիս են Թիֆլիս և յետ են դառ-  
նում իրանց քաղաքը շատ անգամ մեզ չը յանձ-  
նելով էլ իրանց տուած և մեզ հասցնելու փողե-  
րը: Մենք ի՞նչ չենք կարող իմանալ թէ այս ինչ  
կամ այն ինչ անձն, որ եկել է Թիֆլիս Բագուկից,  
Երևանից կամ Բաթումից, մեզ փող ունի հասցնե-  
լու: Ի՞նչ չենք կարող նրա ետեկից վազել ամբողջ  
քաղաքում: Աւելի հեշտ, ակելի լաւ չէր լինի ա-  
պառիկները և առհասարակ բաժանորդագրութիւ-  
նը փոստով ուղարկել: Մի կողմից հայերը զուցէ  
գժգոն են, որ «Մշակը» երկու անգամ ենք հրա-  
տարակում, բայց չեն մտածում թէ տարիներով  
մեզ ամբողջ բաժանորդ չեն տալիս, որ մենք  
ստիպված չը լինենք մեր գրպանից լրագրի դե-  
ֆիցիտը ծածկել. տարիներով դիզված են լրագրի  
չը վճարած ապառիկները:

«Հիւսիսային հեռագրական ընկերութիւնը» հա-  
ղորդում է հետևեալ տեղեկութիւններ Ս. Պետեր-  
բուրգի Բորայի դրուժեան վրա, փետրվարի 28-ից:  
Ռուսաց 3 մի բուլ Լճուճի վրա արժէ 23<sup>29</sup>/<sub>32</sub>  
պէս, Համբուրգի վրա 203<sup>3</sup>/<sub>4</sub> պֆ. Փարիզի  
վրա 251 սանտիմ: Ռսկին արժէ 8 բ. 32  
կոպէկ:

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդում է  
հետևեալը: Արտասահմանեան մամուլը, մասնա-  
ւոր լճուճի «Standart» թերթը, լուր է տա-  
րածում իր թէ Ռուսաստանի և Գերմանիայի մէջ  
կապված է առանձին դաշնագրութիւն: «Journal  
de St. Petersburg» հեղուս է այդ լուրը: Լճուճի  
«Daily News» ասում է որ Բիւսարի կամենում է  
օրուս քաղել Ռուսաստանի բարեկամութիւնից  
որպէս զի նրա համաձայնութիւնը ստանայ թոյլ  
տալ Աւարո-Ռուսագրային լայնացնել իր պետու-  
թիւնը դէպի արևելքը:

Ստացանք Բաֆֆի յօրեխանի առիթով և յան-  
ձնեցիք ուր հարկն է հետևեալ ծրարները: Մօղ-  
ղոկից 60 բուլ, կարսից 71 բուլ, Սարատովից  
25 բուլ, Արմավիրից 46 բուլ, կարատագազ-  
ից 8 բուլ, Ղաբայից 74 բուլ, և Բագուկից 4  
բուլ:

Սուրբ գիրքը Ռուսաստանում տարածելու ընկե-  
րութիւնը, իր գործունէութեան ընթացքում, որ-  
պէս հաղորդում են «Русский Курьер» լրագրին,  
կարողացել է տարածել հողեր բովանդակութիւն  
ունեցող մօտ 750,000 օրինակ գիրք:

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդում է,  
որ պետական կազմերի միջնորդութիւնը ցանկա-  
նալով առաջն անձնը նախկին աղբիւրների ա-  
նազակաբար գործածութեանը, մշակում է կանոն-  
ներ նախկին արդիւնաբերութիւնը կանոնաւորե-  
լու համար: Միջնորդութիւնը նախագծում է նը-  
պատելի կովկասեան նախի մշակութեանը Ռու-  
սաստանում և ուղարկել արտասահման որպէս մը-  
շակված արդիւններ, էժանացնել նախկին ար-  
դիւնների ուղարկելը թէ ներքին և թէ օտար  
վաճառանոցները, ընդարձակել նախկին արդիւն-  
քների վաճառումն Ռուսաստանից դուրս և նախա-  
յին գործը այնտեղ հասցնել, որ դանձարանը օ-  
ղուտ ունենայ նրանից:

«С. Петербургскія Вѣд.» լրագրի հաղորդում  
է, թէ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ  
երգուեալ դատարանները վճիռներ յաճախ հակա-  
ռակում են դատաստանական քննութիւնների  
փաստերին և զբանով հասարակութեան տրուած  
են յարուցանում, արդարադատութեան միջնորդ  
ժողովրդական ընթերցանութիւնների յանձնաժո-  
ղովին առաջարկեց մի բրօշուր հրատարակել, որը  
կը բացատրէր երգուեալ դատարանի պարտաւորու-

թիւնները, օրէնքի տառի համաձայն: Բրօշուրը  
կազմելու համար մրցումն է նշանակված, որին  
մասնակցում են յայտնի իրաւաբաններ:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ**

«Temps» լրագրի տպել է մի յօդուած  
Ռուսաստանի արևելեան քաղաքականութեան մա-  
սին, որի մէջ հաւատացնում է որ իբր թէ Ռու-  
սաստանը շարունակում է իր աննկատելի կերպով  
մաքառումն Թիւրքիայի դէմ, մտտեալով Փաղը-  
Արիային: Ֆրանսիական լրագրից կարծում է, որ  
գործունէութեան դաշտը այժմ լինելու է թիւրքաց  
Հայաստանը: Խօսելով Մէրվի միացման մասին  
«Temps» ասում է, որ Ռուսաստանը ձեռք բերե-  
լով այդ բանալին դէպի Պարսկաստան և Ազա-  
նիստան, իբր թէ վերադառնալիս, բայց  
այնպէս անսպասելի և համարձակ կերպով կատա-  
րեց այդ գործողութիւնը, որ Անգլիան նախապատ-  
ուեց չը նկատել յաղթութիւնը: Առհասարակ Ֆը-  
րանսիական լրագրից կարծես դժգոն են Ռու-  
սաստանից նրա բարեկամութեան պատճառով եւ-  
րօպական կենտրոնական պետութիւնների հետ:

«Հիւսիսային գործակալութիւնը» հաղորդում  
է, որ հնդկական գործերի պետական քարտուղար  
Կիլբերթը յայտնեց յօրեղի ժողովում, որ նա եր-  
բէք անտարբերութեամբ չէր վերաբերվում ուս-  
աց յարձակողական շարժմանը Արիայում, որ  
ուսաց կալուածները մօտենալը անգլիական  
կալուածներին պահանջում է համաձայնութիւն և  
որ անհանդիսա լինելու դեռ ևս ոչինչ պատճառ  
չը կայ, բայց այնուամենայնիւ անհրաժեշտ է մի-  
ջոցներ գործ դնել Հնդկաստանի սահմանները ա-  
պահովելու համար:

«Հեռագիրը հաղորդում է, որ Փարիզի կոմի-  
տեային ուղարկած ծրարը զգուշութեամբ բանա-  
լու ժամանակ, երեքսու, որ ծրարը լրացած է  
գինամիտի մեծ քանակութեամբ, գինամիտը այն-  
պէս էր զետեղված ծրարի մէջ, որ ձայնի ժա-  
մանակ կարող էր մի քանի մարդ սպանել:

«Փարիզից» «Հիւսիսային գործակալութեանը»  
հեռագրում են, որ իշխան Նապոլէօն, ընդունելով  
բժնապարտեան ժողովաններին, ասեց, որ ոչինչ  
բան չը պէտք է գրի ժողովրդին իր վիճակը  
որոշելու իրաւունքից. մի և նոյն ժամանակ իշ-  
խանը խոստացաւ ետանդով ընդդիմանալ այն ա-  
մենին, ով կը կամենայ սեփականել ժողովրդա-  
կան այգուսի իրաւունքը:

«Pall-Mail Gazette» լրագրի շատ հետա-  
քրքրում է, թէ որպիսի նշանակութիւն կարող է  
ունենալ Ռուսաստանի մօտիկ բարեկամանալը  
Գերմանիայի հետ Անգլիայի համար, և մասնա-  
ւոր եղիպտական հարցի համար, որը, ազատա-  
միտ լրագրի խօսքերով, միջազգային նշանակու-  
թիւն ունի: Վերջինից լրագրից կարծում է, որ  
այդ դաշնակցութեան աղբիւրութիւնը Անգլիայի  
համար միայն բարեպաշտ հետևանք կունենայ և  
անա ինչ պատճառներով. անգլիական կառավա-  
րութեան համար գլխաւոր գոտարութիւնը եղիպ-  
տական հարցում ներկայացնում է Ֆրանսիան:

Բայց իշխան Բիւսարիկ նախ և առաջ գործնա-  
կան մարդ է: Որ և է ընդհարումն եղիպտոսում  
սպառնում է քանդել միջազգային խաղաղու-  
թեան կապը, որի պահպանելը կանցելը իր  
կենսիկ նպատակն է դրել. մի և նոյն ժամանակ  
միջազգային յարաբերութիւնների մէջ սկսված ա-  
մեն դժուարութիւններից օգուտ կը քաղէ Ֆրանս-  
իան իր ցանկալի նպատակին հասնելու համար:  
Այդ պատճառով բնական է, որ իշխան Բիւսարիկ  
հակառակ կը լինի եղիպտոսի անգլիական քաղաքա-  
կանութեան միջամտութեանը: Ռուսաստանը, անդ-  
լիական օրգանի խօսքերով, մինչև այժմ սատակ ըս-  
տացում էր անգլիական հովանաւորութեան դէմ Նե-  
ղոսի վրա և պահանջում էր այդ խնդրի միջազ-  
գային վճիռը: Ռուսաստանի ցանկութիւնն էր, որ  
Սուէդի ջրանցքը և Նեղոսի դէտան միաժաման-  
ակ պատկանէին բոլոր եւրօպական պետութիւն-  
ներին:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ արանով յայտնում է որ ներկայ տարվայ մարտ ամսի 6-ին ՆՇԱ-ՆԱԿԱՍԵ Է ԱՃՈՒՐԿ ԿԱՎԱՐՈՎ ԽԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՂԵՐԸ բուրգաների համար, արուեստական հանքային ջրեր ծախելու պայման կապելու օրից երեք տարի ժամանակով, այն է Գօլովինսկի պրոսպեկտի վրա գտնվող Գիմնազիչեսկայա փողոցի վրա 1, րազգոնայա փոստի կայարանի հանդէպ 1, Իէյտերի տան մօտ 1, Անտօնովի տան մօտ 1, Ալեքսանդրեան պողոտայի վրա 1, Կաղեօնայա պարտապի մօտ 1, Երևանեան հրապարակի վրա 3, և Հալաբար 1, բոլորը 9 տեղ: Կապելով վերջնել ցանկացող անձինք կարող են տեսնել պայմանները ամեն օր մինչև ցերեկվայ 2 ժամը, բացի կիրակի և տօն օրերից: 2—2

Վրա գտնվող Գիմնազիչեսկայա փողոցի վրա 1, րազգոնայա փոստի կայարանի հանդէպ 1, Իէյտերի տան մօտ 1, Անտօնովի տան մօտ 1, Ալեքսանդրեան պողոտայի վրա 1, Կաղեօնայա պարտապի մօտ 1, Երևանեան հրապարակի վրա 3, և Հալաբար 1, բոլորը 9 տեղ: Կապելով վերջնել ցանկացող անձինք կարող են տեսնել պայմանները ամեն օր մինչև ցերեկվայ 2 ժամը, բացի կիրակի և տօն օրերից: 2—2

„Ա Ղ Բ Ի Ի Ր“

Լոյս տեսաւ № 3 (մարտ) և ուղարկվեց բոլոր բաժանորդներին:

ԲՈՎԱՆԻՍԿՈՒԹԻՒՆ Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Table with 2 columns: Name/Category and Price/Value. Includes items like Զսկայ-Մըջիւն, Քարգ, Մեր Գուրտուկը, Աղբիւր, Պարոյր Զայիազն.

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ն Ե Ի Ա Ր Ո Ւ Ե Ս Տ

Մեր բարերարները II Ս. Մեբրոպ և Հայոց տառերի գիւտը 4. Մ. Շահնազար. Եւէքարականութիւն II Ն. Ա.

ՀԵՏԱՔՐԲԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Խրոմօզրաֆ . . . . . Մ.

ԱՅԼՆԵՒՅԼՔ

Նրա խտազիտուութիւն (Քարգ. Ֆրանս): . . . . . Փ. Վ.

ՋՈՒՐԱՃԱԼԻՔ

Հանելուկներ (4 հատ.) Մբամիա խնդիր Շուտասելուկ Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների և յերուսների բացատրութիւնները:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Գ

Մանուկները և նրանց ընթերցանութիւնը: Համառօտ հայեացք բնագիտութեան դասատուութեան և ուսումնադրասանքների վրա . . . . . Գ. Խոջամիրեանց. Կամբի ոյժը (Ա. Բահաթրեանց)՝ Մեր առաջարկութիւնները.՝ Բնագիտական զրբեր: Մանկական օրինակելի զրարարան. Խառն լուրեր: Մի կարճ նկատողութիւն. „Աղբիւրի“ նուիրողներ:

НА ЛѢТНІЙ СЕЗОНѢ ПОСЛѢДНЫХЪ ФАСОНОВЪ ДАМСКІЯ, МУЖСКІЯ И ДѢТСКІЯ ШЛЯПЫ И ДРУГІЕ МОДНЫЕ ТОВАРЫ

ВЪ СКЛАДѢ ЗАГРАНИЧНЫХЪ МОДНЫХЪ ТОВАРОВЪ

ГУЛАСПОВА

на Дворцовой улицѣ, домъ Цовьянова и Сараджева, во „дворѣ“, рядомъ съ магазиномъ Варшавской обуви Гиргидова, ходъ-же во дворѣ, рядомъ съ кондитерской РЕНЬЕ.

БОЛЬШОЙ ВЫБОРЪ ДАМСКИХЪ, МУЖСКИХЪ И ДѢТСКИХЪ СОЛОМЕННЫХЪ ШЛЯПЪ съ отдѣлкою и безъ отдѣлки. ТОРГОВЛЯ ОПТОМЪ И РОЗНИЧНО.

ВСѢ ТОВАРЫ НАХОДЯЩЕСЯ ВЪ МОЕМЪ СКЛАДѢ продаются ДЕШЕВЛЕ ПРОТИВЪ ДРУГИХЪ КОММЕРСАНТОВЪ.

Складъ открытъ ежедневно отъ 7-ми часовъ утра до 11 часовъ вечера. Гуластповъ. 1—5

ՍՏԱՄՈՒՔԱՅԻՆ ՅԱԽԻՐԸ

ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ ԲՈՒԴՕ

Այս գինին շատ համեղ է և 25 տարիների ընթացքում աջողութեամբ գործ է զբոսում հեռուեայ գէպերում. ԱՌՈՐՁԱԿԻ ԲՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ, ՍՏԱՄՈՒՔԻ ՅԱԽԻՐ, և ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆ: Պէպսին „Բուգօ“ ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և ստացել է առաջին մեդալներ հեռուեայ աշխարհահանգներին փարիզի 1867 թ., Վիեննայի 1873 թ. ՅՊԱԿԵԼԵԱՅԻՆ 1876 թ. փարիզի 1878 թ.: Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria. Կովկասի համար պահեստ. ԳեղԱՍԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՏԻՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍ ՄԷՋ:

2—80 (է. շ.)

ՍԻԳԱՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ա. Գ. ՏՕՊԵՐԻ

Ս. Պետերբուրգի մէջ: Չերնիշեով պերեուլոյ, № 4: Սիգարներ շատ լաւ յատկութեան 1 ռուբլուց մինչև 16 ռուբլ չարիւրը: Կարելի է լաւ տանալ Ռուսաստանի ծխախոտների բոլոր խանութների մէջ:

10—12

ՄԱՆՈՒՅԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ջ Ի Ն Գ Ե Ր

Ն Ի Ի Ի Ո Ր Կ Ի Մ Է Ջ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՉԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ:

Մատում է ամենալաւ համարված կարեմքեաններ նպատող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահանջում են փշանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթեւ ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու: Կախումէ

ԿԷՍ ՄԻԼԻՅՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱԻԵԼԻ ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Ձերերի կարեմքեանների համար:



ՆԱԽԱԶԳՈՒՆՈՒԹԻՒՆ. Ձերը: Ե խիական կարեմքեանները մեծ վարկ ունեն, որովհետեւ իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին գնայլեցնում են և այդ պատճառով ուրիշ դո: առաները նրանց կեղծում են և ծախում են Ձերերի խիական կարեմքեանների տեղ: Զգուշացնում եմ ձեզ, որ Ձերերի խիական խրաքանչիւր կարեմքեան The Singer Manufacturing Co-՝ ֆիրմայից ունի գործարանի գրօշմեր մեքենայի կովի և մամուլի վրա. The Singer Manufacturing Co-՝

Ն. Ն. ՅՊԻԼԻՆԳԵՐԻ, ԹԻՖԼԻՍ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՄԻՐԻՍԱՆՕՎԻ

ԲԱՌՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի: ԲՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Շնէյդերի: ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Միբգա-Աւազովի: Խրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Ձերերի ամենաօգտակար և խիական կարեմքեան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շարախական 1 ո. 50 կ. վճարելով առանց խիական զինք բարձրացնելու: Հնացած մեքենաները խանութը փոփոխում է: 40—50 (1)